դանդաղկոտ Հայերը փոյթեռանդն են երեւում դէպի այդ տեսակ նորամուտ սովորութիւններ։ Ա՜խ Հայոց օտարամոլութիւն։

Կ. Կոստանդնուպօլսում Պ. Տիմիթրիոս Զօլաքեան Հայագէտ Յոյնը Հայոց Մկրտութեան Ս. Խորհուրդը և Ս. Ներսէսի թղթերն Յունարէնի է թարգմանել։

—

Ալէքսանդրապօլու միճակային դպրոցի Դասատու Մեծ. Պ. Գաբրիէլ Տէր Գաբրիէլեանից շնորհակալութեամբ ստացանք իր «Ընդհանուր Աշխարհագրութիւն Ուսումնական և Բնական աշխարհագրութիւն» վերնագրով դասագիրքը որ տպուած է Թիֆլիզում Պ. Մովսէս Վարդանեանի և Ընկ. տպարանում. գինն է 30 կոպ.

—

Անցեալ Հոկտեմբեր և սոյն Նոյեմբեր ամսատետրակիս մէջ հրատարակուեց 188'/, ուսումնական Տեղեկագրի հետ նաև Ճեմարանի Ծրագիրը.

Այդ ծրագիրը որչափ և շատ համառօտ է կազմուած, այնու ամենայնիւ կարող է բաւականութիւն տալ հետաքրքիր բանասէրներին, որոնք կարող են գաղափար կազմել Ճեմարանի ուսումնական մասին վերայ.

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ.

«Մանկութեան օրեր երազի նման
«Անցան գնացին, էլ չեն դառնալու»

Ա՜խ, ի՞նչ քաղցր էին վայելածս օրեր,
Որքա՜ն քաղցրագոյն անցուցածս ժամեր.
Երբ անհոգ, ուրախ ամենից սիրուած՝
Չունէի երբէք հոգս, վիշտ ու ցաւեր,
Ընկերքս անխարդախ, չըկար մեր մէջ ոխ,
Մանկտւոյս օտար էր իսպառ չարութիւն.
Չըկար ստորաքարշ ստրուկ կամ խարող,
Թագաւորում էր սուրբ ազնուութիւն.
Այլ աւա՜ղ, շատ սուղ տեւեցին նոքա.—
Կեանքը նիւթական շահ յառաջ բերեց,
Անգութ բռնութեամբ ճնշեց ամենին
Իրան հպատակ ու գերի արեց.
Ես հրաժեշտ տուի ուրախ ժամերէս
Կարծելով բաղդիս նոր գայ ասպարէզ.
Կամեցայ իբրև նոր ծաղիկ հրճուիլ
Ճշմարտութեանը գոլով ողջակէզ . . .

Բայց ափսոս շատ շուտ դառնաշունչ խորշակ
Շուտ թարշամեցրեց ծաղիկս նորաբաց.
Երևակայածս մնաց միայն ցնորք,
Ցաւոց տրտմութեան ես եղայ կցորդ.
Թափուր նստեցի բարեկամներից,
Ներնգաւոր սրտեր ինձ պաշարեցին.
Տարբեր հայեացքով և ոգւով տարբեր
Իւրեանց շահին ինձ խաղալիք արին.
«Թո՛ղ, ինձ ասումեն, գաղափարներդ,
Ասումեն կեղծիր, գէմքդ մեզ նման.
Գլխակոր չոգիր կարողի առաջ
(Թէև լինի չար), թէ չէ զոհ կերթաս . . .»

Մկրտիչ Տէր—Մարտ. Կարապետեանց.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

(ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾ)

ՎԱՐԶԱԿԱՆ.

12 Հոկտ. Սինոդը ի տեղի Հանգուցեալ Մամիրէ վարդապետի՝ Մայր Աթոռոյս միաբան Արժ. Պետրոս Վարդապետին նշանակեց Վաղարշապատու կեդրոնատեղում Գործակալ.

12 Հոկտ. Սինոդը ի տեղի Հանգուցեալ Յովհաննէս վարդապետի Երեմեան Գեր. Յովհաննէս Եպիսկոպոս Տէր Յարութիւնեանին նշանակեց Հին Նախիջևանի Յաջորդ.

ԴՊՐՈՑԱԿԱՆ

23 Սեպտեմ. Սինոդը Գեր. Սերովբէ Արքեպիսկոպոսին նշանակեց Աստուածաբանութեան դասատու Ս. Էջմիածնի Ճեմարանի բարձր դասարաններում, իսկ Յուսիկ Վարդապետին Հայերէն լեզուի և Կրօնի.

9 Սեպտեմ. Սինոդը Թիֆլիզի Ներսիսեան Հոգևոր Աղգային դպրոցի Հոգաբարձութեան Օգոստոսի 31 ին № 286 յայտարարութեան համաձայն Պ. Սողոմոն Եղիազարեանին հաստատեց Տեսուչ նոյն Դպրանոցի.